

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
Մ. ԱՔԵՂՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ**

ՍՈՒՔԻԱՍՅԱՆ ՆԱՐԵԿ ԳԱԳԻԿԻ

**ԵՂԻՇԵ ԶԱՐԵՆՑԸ ԵՎ 20-ՐԴ ԴԱՐԱՍԿԶՔԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ
ԳՐԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ**

**Ժ. 01.02 - «Նորագույն շրջանի հայ գրականություն» մասնագիտությամբ
բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի
հայցման ատենախոսության**

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2023

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտում

Գիտական ղեկավար՝

բանասիրական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր Ավիկ Վիգենի Իսահակյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

բանասիրական գիտությունների դոկտոր
Մուսայելյան Հովիկ Գաստելլոյի

բանասիրական գիտությունների թեկնածու
Ավանեսյան Արմեն Ավանեսի

Առաջատար կազմակերպություն՝

Երևանի Խաչատուր Աբովյանի
անվան հայկական պետական
մանկավարժական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2023 թվականի ապրիլի 28-ին, ժամը 12:30-ին, ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտում գործող ԲՈԿ-ի Գրականագիտության 003 մասնագիտական խորհրդում: Հասցեն՝ Երևան, Գրիգոր Լուսավորչի 15:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2023 թվականի մարտի 15-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,

բանասիրական գիտությունների թեկնածու՝ *Ս. Մարգարյան* Ս. Ա. Մարգարյան

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Սույն ատենախոսությունը նվիրված է «Եղիշե Չարենցը և 20-րդ դարասկզբի համաշխարհային գրական զարգացումները» թեմայի ուսումնասիրությանը: 20-րդ դարի սկզբներին հայ գրականությունը մտնում էր առաջընթացի ու զարգացման նոր շրջափուլ. գրական ասպարեզ էր գալիս տաղանդաշատ բանաստեղծների մի փայլուն համաստեղություն՝ առաջ բերելով աշխարհաճանաչողական նոր մոտեցումներ, անհատի ու ժամանակաշրջանի, անհատի ու հասարակական հարաբերությունների մասին նոր պատկերացումներ և դրանց համապատասխան՝ տաղաչափական նոր ձևեր, գրական լեզու և ոճ:

Նորի առաջադրությամբ հայ գրականություն եկավ նաև Ե. Չարենցը՝ «մարդու հայրենիքի այս հարատև կռվի ոչ մի պահը չուրացած և ոչ մի մարտը չշրջանցած», «հավերժի բանաստեղծը», ում բանաստեղծական անհատականությունը ձևավորվեց ինչպես Արևմուտքի, այնպես էլ նաև՝ Արևելքի գրական և մշակութաբանական ազդեցություններով. «Ի՛նչ գեղեցկորեն էր բերում մեր ավանդական «հացին երգը», հեթանոսական տարերքն ու Նարեկացիական տիեզերականությունը՝ դեպի քսաներորդ դար: Որքան բնականորեն էր շաղկապում հայկական մշակույթի կենաց արմատը Արևմուտքի ու Արևելքի, նորագույն ժամանակների գեղարվեստական գիտակցության, արևմտաեվրոպական գեղագիտության նորագույնի հետ»¹:

Ազդեցություններ կրելով սկզբնապես ֆրանսիական սիմվոլիստներից՝ Ե. Չարենցն իր գրական փորձը համադրեց հայ միջնադարյան քնարերգության, ինչպես նաև համաշխարհային գրականության փորձին (այդ թվում նաև՝ ժամանակակիցների փորձին)՝ ստեղծելով փիլիսոփայական ընդգրկումների տեսակետից, մինչև այժմ չկրկնվող «նախօրինակը», խիզախ և իմաստուն խորհուրդների ճանապարհի գիրքը՝ «Գիրք ճանապարհին»:

ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՄՇԱԿՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ

«Եղիշե Չարենցը և 20-րդ դարասկզբի համաշխարհային գրական զարգացումները» ատենախոսությունը կարևոր և արդիական է, և ըստ այդմ, վաղուց նեթ է նկատված, «որ Չարենցի ռեալիստական պոեզիայի բարձրակետը դարձան «հոգեբանական շարքի» այն երկերը՝ «Մեծ ստորյան», «Խմբապետ Շավարշը», «Դեպի լյառը Մասիս» պոեմները, որոնք ռեալիստական հոգեբանական արվեստի հոյակապ նմուշներ են, որոնցով Չարենցը ցուցադրեց ստեղծագործության այդպիսի տեսակի մեծ ուժն ու հնարավորությունները: Նա

¹ Տե՛ս «Փոքր Մհերի դրախտավայրը», Գրական թերթ, թիվ 7, 2013, էջ 1:

ապացուցեց, որ ռոմանտիկ-հերոսական ոճի երկերի կողքին ընդունակ է ստեղծագործելու նաև ռեալիզմի դասական սկզբունքներով: Այդ պոեմները կարող են համադրվել ռեալիստական պոեզիայի ճանաչված գազաթների հետ, ինչպես՝ Պուշկինի ետռոմանտիկական ստեղծագործությունը, Նեկրասովի և Թումանյանի պոեմներն ու բալլադները դասական գրականության մեջ...»²:

Այսպես, սիմվոլիզմի, ֆուտուրիզմի և մոդեռնիզմի՝ հայ գրականության մեջ դրանց դրսևորումների հիմնահարցերն ամենատարբեր մոտեցումներով քննարկվել են դեռևս 20-րդ դարի սկզբին: Հայ գրականության մեջ ամենից լայն տարածում գտած ուղղություններից մեկի՝ սիմվոլիզմի գրական հարցերին առաջինն անդրադարձել է Ն. Ադոնցը՝ «Դեկադանս և սիմբոլիսմ» հոդվածում: Իր ծավալուն հոդվածում Ն. Ադոնցն անդրադարձել է ֆրանսիական սիմվոլիզմին և, հետևապես, չէր կարող խոսել հայ բանաստեղծների և սիմվոլիզմի գրական առնչությունների մասին, քանզի արևմտահայ գրականության մեջ նշմարվում էին թույլ արձագանքներ միայն, իսկ արևելահայ գրականության մեջ այդ արձագանքները դեռևս չկային:

Գրականության պատմության ընթացքում սիմվոլիզմի հանդեպ տարբեր է եղել ուսումնասիրման եղանակը: Գրական տարասեռ ոճերի և ուղղությունների ծնունդն ու անհետացումը պայմանավորված էր ժամանակաշրջանի ոգով ու իրականության հանգամանքներով: «Հեթանոսականությունը» և սիմվոլիստների, այդ թվում նաև Ե. Չարենցի պոեզիայում («Կապուտաջա հայրենիք», «Դոֆին նաիրական», «Իմ լեռան աղոթքը», «Ի խորոց սրտի...») ենթակա էր «դարաշրջանի քմահաճույքներին»: Գրական փոխկապակցվածությամբ՝ ավելորդ չէ հիշել «պատկերապաշտության» խոշորագույն ներկայացուցիչներից մեկին՝ Սերգեյ Եսենինին, ով «առաջ էր շարժվում մեծ հղացքներով, «փլուզելով» պոեզիայի հնացած շենքը, կենարար հոսքեր ու հզոր, զնգուն պատկերամտածողություն բերելով դարասկզբի հաճախ տեսականորեն իրարամերժ, բայց նորարարական պաթոսով միահյուսվող ու խաչասերվող գրական դպրոցներին»³:

Աշխատանքում վերլուծվել են ֆուտուրիզմի՝ հայ գրականության մեջ նրա դրսևորումների տարաբնույթ հիմնահարցերը: Անդրադարձել ենք «Երեքի» դեկլարացիային ու ֆուտուրիստական մի շարք հիմնախնդիրների, որոնք հակամարտությունների պատճառ են հանդիսացել իրենց ժամանակին: Այդ առիթով ժամանակի մամուլը գրել է. «Տալի՛ս է արդյոք պոետը լինի՞ նա ինտելիգենտ, թե պրոլետար-բանվոր դասակարգին հարազատ ապրումներ: Մայակովսկին, ինչպես և նրա շնորհալի հետևորդ Չարենցը, այդ է, որ չեն տալիս մեզ

² Զրբաշյան Է., Չորս գազաթ. Թումանյան, Իսահակյան, Տերյան, Չարենց, Ե., 1982, էջ 387:

³ Եսենին Ա., Բանաստեղծություններ և պոեմներ, Ե., 2005, էջ 9:

նույնիսկ այն դեպքում, երբ անցնում են Աստաֆյան կամ Մոխովայա փողոցով՝ թեկուզ կուսակցական շենքի կողքով շա՛տ, շա՛տ մոտ: Որովհետև նրանք չեն ապրում գիտակից բանվորության դասակարգային գոյամարտի հոգեբանությամբ, այլ մեծ իրադարձի միայն ֆանֆարային (թմբկային) էֆեկտով»⁴:

Անհրաժեշտ է նշել, որ ֆուտուրիզմի պայթույն արտահայտվեց Ե. Չարենցի, Վ. Մայակովսկու և Վ. Խլեբնիկովի գործերում, որոնց մեջ սերտորեն միաձուլված էին անձնականն ու հասարակականը: Չարենցի գործերում ֆուտուրիզմը՝ «բուրժուական ջղաձգումների այդ հոսանքը», իր հասարակական նշանակությամբ բնութագրական է դառնում նոր մարդու զգացմունքները պատկերելու տեսակետից: Այդուհանդերձ, Ե. Չարենցի գործերում արծարծվող համամարդկային թեմաները բանաստեղծին դուրս են բերում ֆուտուրիզմի շրջանակներից:

Ի տարբերություն սիմվոլիզմի և ֆուտուրիզմի, մոդեռնիստական ուղղությանն առնչվող հիմնահարցերը չեն վերլուծվում և ուսումնասիրվում ոչ մամուլի, ոչ էլ գրական հանդեսների էջերում: Սակայն, նորություն պետք է համարել Հասմիկ Խեչիկյանի և Հրաչյա Սարիբեկյանի հեղինակած՝ «Մոդեռնիզմի դրսևորումները 20-րդ դարի հայ գրականության մեջ» ուսումնասիրությունը, որտեղ անվերապահորեն ամենայն մանրամասնությամբ քննության են առնված մոդեռնիստիկ անհանգստացիկ հիմնահարցերը, ինչպես նաև Ե. Չարենցի երկերում մոդեռնիզմի պարփակող գեղագիտական «տարրերի» և ֆուտուրիզմի ձևական «կանոնների» «փոխարկման» հնարավորությունները:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ

Ուսումնասիրության առարկան Ե. Չարենցի գրական ստեղծագործությունների համեմատական-տիպաբանական վերլուծությունն է, մոդեռնիստական առանձին ուղղությունների վերաբերյալ Ե. Չարենցի դիտարկումներն ու քննադատությունները, ինչպես նաև բանաստեղծի ստեղծագործությունների մասին ստեղծված գրականագիտական ուսումնասիրությունները:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ուսումնասիրության նպատակն է՝ ի մի բերել գրական տարբեր ուղղությունների վերաբերյալ հայ քննադատական մտքի դիտարկումները և գրական երևույթների գնահատման արդի պահանջմունքներից ելնելով ներկայացնել Ե. Չարենց-սիմվոլիզմ, Ե. Չարենց-ֆուտուրիզմ և Ե. Չարենց-մոդեռնիզմ առնչությունները:

Առաջադիր խնդիրներն ածանցվում են ուսումնասիրության նպատակից.

⁴ Կարմիր աստղ, 6 հունվարի, Թիֆլիս, 1923, թիվ 4, էջ 3:

1. Սիմվոլիզմի, ֆուտուրիզմի և մոդեռնիզմի հետ Ե. Չարենցի առնչությունները ներկայացնել՝ ոչ թե գրական հրապուրանք և կամ «նորաբանություններին» հետևելու միտում, այլ որպես աշխարհայեցողության դրսևորումներ, գրական առաջընթացից հետ չմնալու կարևորագույն պահանջ:
2. Տույց տալ, որ առանց այդ ուղղությունների՝ Չարենցի ստեղծագործությունների վրա թողած ազդեցությունների բացահայտման, անհնարին է հետևել բանաստեղծի գրական որոնումներին, նրա ստեղծագործական հասունացման վերելքին և ամփոփել ատենախոսության հիմնադրույթները:
3. Վերաթմուրել և մեկնաբանել Ե. Չարենցի, եվրոպական և ռուս գրողների ստեղծագործական փոխառնչություններն ու փոխազդեցությունները, նրանց ժառանգության վերաբերյալ գրական գործիչների կարծիքները:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ

Գիտական նորույթն այն է, որ ժամանակակից հայ գրականագիտության համապատկերում փորձ է արվում քննության առնել տարաբնույթ ուղղությունների և Չարենցի ստեղծագործությունների՝ նրանց ունեցած ազդեցություններն ու կապերը, ժամանակագրական բազմակողմանի վերլուծությամբ:

Որպես ուսումնասիրության առանձնահատուկ խնդիր՝ քննության են առնվել Ե. Չարենցի, եվրոպական և ռուս բանաստեղծների գրական փոխառնչությունները՝ շաղկապված ոճական, տաղաչափական և ժանրային առանձնահատկությունների հետ: Այդ տեսանկյուններից աշխատանքում ծավալուն անդրադարձ է կատարվել գրականության մեջ անգնահատելի ներդրում ունեցած հայ և օտարազգի գրողների գրական-գեղարվեստական ժառանգությանը՝ ձգտելով տեսական նշանակությամբ տվյալ աշխատանքով լրացնել մինչ օրս ասպարեզում եղած գրական արժեքավոր ուսումնասիրությունների շարքը: Բացի վերը նշվածներից, ատենախոսական թեմայի վերաբերյալ շրջանառության մեջ է դրվում աղբյուրագիտական հարուստ նյութ՝ ներառված նաև գրականագիտական նորագույն հրատարակությունները:

Փորձել ենք համեմատական, ժամանակագրական, վերլուծական մեթոդների համադրմամբ ուրվագծել Ե. Չարենցի գրական ստեղծագործություններում 20-րդ դարի սկզբների համաաշխարհային գրական զարգացումների արձագանքները: Տույց ենք տվել, որ Ե. Չարենցի ստեղծագործությունների վրա սիմվոլիզմի, ֆուտուրիզմի և մոդեռնիզմի (հրապաշտության) ազդեցությունն

այնքանով է եղել նշանակալի և կարևոր, որքանով պահանջում էր դարաշրջանը. ինչպես՝ ժամանակի «գործառույթի» ճշգրիտ պատկերման, այնպես էլ՝ բանաստեղծական կառույցի «կատարելագործման» և գեղագիտական կողմնորոշման չափորոշիչների տեսանկյուններից:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ուսումնասիրության ընթացքում կիրառել ենք համեմատական, համադրական, ժամանակագրական, վերլուծական-քննական մեթոդներ: Գլխավորապես օգտվել ենք անվանի գրականագետների ուսումնասիրություններից, գրական նորագույն աղբյուրներից:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԿԻՐԱՌԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներկա ուսումնասիրությունն օգտակար կարող է լինել բակալավրիատում և մագիստրատուրայում հատուկ դասընթացների, գիտական ընթերցումների անցկացման, իսկ ավելի լայն առումով՝ արդի գրական և գիտական զարգացումներով հետաքրքրվողների համար՝ պայմանավորված է. Չարենցի գրական ժառանգության ուսումնասիրմամբ: Տվյալ աշխատանքն ունի ճանաչողական մեծ նշանակություն՝ շաղկապված նյութի արդիականությամբ և նրա թեմատիկ բազմազանությամբ:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսությունը քննարկվել և պաշտպանության է երաշխավորվել ՀՀ ԳԱԱ Մանուկ Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի Նորագույն շրջանի հայ գրականության բաժնում: Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են ՀՀ ԲՈԿ-ի կողմից ընդունելի պարբերականներում: Աշխատանքի հիմնական դրույթները զեկուցումների տեսքով կարդացվել են նաև մի շարք գիտաժողովներում:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

«Եղիշե Չարենցը և 20-րդ դարակազբի համաշխարհային գրական զարգացումները» թեման բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից՝ համարժեք ենթագլուխներով, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից: Ատենախոսության ծավալը 130 էջ է:

Ներածության մեջ համառոտ կերպով ներկայացրել ենք ուսումնասիրության ընդհանուր բնութագիրը, նրա արդիականությունը, մշակվածության աստիճանը, գիտական նորույթը, նպատակն ու խնդիրները, մեթոդաբանությունը, տեսական ու կիրառական նշանակությունը:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ. ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑԸ ԵՎ ՍԻՄՎՈԼԻԶՄԸ

1.1. «Կորուսյալ երազի անհայտ ուղիներով»

Առաջին ենթագլխում անդրադարձ ենք կատարել Ե. Չարենցի վաղ շրջանի այն բանաստեղծություններին, որոնց վրա զգալի է սիմվոլիզմի շոշափելի ազդեցությունը: Հատկանշական է, որ սիմվոլիստների վրա դեռ ազդեցություն էր գործել ռոմանտիկ բանաստեղծ Էդգար Պոն, որի «գրականությունն, ըստ ամենայնի, հանդիսացավ այն նշաձողը, որից սկիզբ առավ նոր տեսակի պոեզիան: Այդ հանգամանքը շուտով գտավ հետևորդների իր խումբը, որոնք հաճախ սխալ հասկացան «վարպետի» ոգին»⁵: «Քաղաքակրթության վախճանը» սիմվոլիստներին ստիպում էր փախչել: Փախուստի հիմնաթեման բնորոշ է դառնում շատ սիմվոլիստների գործերին: Շտեֆան Գեորգի բանաստեղծությունների «իրապաշտական» պատկերայնությունը կառուցված է համանմանության սկզբունքով, իսկ արդեն նրա խոշոր գործերում մետաֆորների դիցաբանական բովանդակությունը փաստացիորեն կորչում կամ հիմնավորապես փոխվում է. «Ու ճամփա ընկա // դարձա շրջմովի մի օտարական // և փնտրում էի մեկին, որն ինձ հետ // թախծեր և սակայն // ոչ մեկը չկար»: Ե. Չարենցի վաղ բանաստեղծություններում «հավերժական վերադարձն» է. «Ամեն տազնապ ու հոգս թողած երկրի հողին // Քայլի՛ր, քայլի՛ր անվերջ կարոտներիդ ուղին. // Մի կարոտ է հոգիդ, հեռու աստղի մի փայլ- // Քայլի՛ր, քայլի՛ր անվերջ, հավերժասե՛ր եղբայր...»: Նաև՝ «Հայտնի է, որ սիմվոլիստներն իրենց հոգևոր նախորդներ էին համարում ոչ միայն ժամանակով ավելի մոտ Շառլ Բոդլերին, այլև այնպիսի հեռավոր գրողների, ինչպիսիք էին Շեքսպիրն ու Գյոթեն: Այս միտումը ենթադրում էր նորովի ընթերցել վերջիններիս ստեղծագործությունները, նմանություններ գտնել նրանց սկզբունքների, կիրառած գեղարվեստական եղանակների մեջ»⁶:

Ե. Չարենցի բանաստեղծական առաջին ժողովածուն՝ «Երեք երգ տխրադալով և աղքական», կրում է սիմվոլիզմի ազդեցությունը: Գրքի բնաբանը քաղված է Ալբեր Սամենի «Ամենտի» բանաստեղծությունից: «Երեք երգում» ակնառու են նաև՝ վեռլենյան պոեզիայի սիմվոլիստական հնչերանգները.

Պ. Վեռլեն՝

Պանդոկների ժխոր, ցեխոտ մայթեր տրտում,
սոսիների դեղնած տերևներ սև օդում,
հանրակառքը՝ կեղտի ու երկաթի քառս,
ճոնչում է՝ կքած ակների վրա չորս:

⁵ Պո Է., Հայտնվող սիրտը, Բերենիկա, Սև կատուն, Ս. Ղազար-Վենետիկ, 1925, էջ 5:

⁶ Անանյան Գ., Եղիշե Չարենցը և ռուս գրականությունը, Ե., 1979, էջ 95:

Ե. Չարենց՝

Օրորվելով կառքն էր վազում սրընթաց
դաշտի միջին, ճանապարհով ցեխապատ:
Թոնն էր մաղում միապաղաղ, ցուրտ ու թաց:
Օրն էր մարում հիվանդոտ ու մեղմ-վիատ:

Ե. Չարենցի երկերում իրականությունը ներկայանում է տրանսցենդենտալ սուբյեկտին «ընտելացված»: Եվ ըստ այդմ, ոչ պակաս ակներև է արտահայտված իրականության խորհրդանշական ընկալումը «կրկնվող» մետաֆորների միջոցով, և անգամ կարելի է պնդել, որ այս պարագայում ևս տվյալ հանգամանքը մետաֆորի գլխավոր նպատակն է: Այդպիսով՝ «կարող ենք ասել, որ «Երեքը» բալլադի հիմքում միֆական «հատկություն» և «ոչ հատկություն» (կրկնակներ) դիցաբանական ընկալումն է, որը կազմակերպում է ստեղծագործության կառուցվածքը: Չարենցը սիրո ապրումը ծավալում է միֆական կրկնակային՝ գոյություն ունեցող և իռացիոնալ հատկանիշներով, կյանքի և «կյանքի չգոյության» շրջանակում (գոյ և անգոյ), ինչը և բանաստեղծական միստերիայի հիմնաթեման է»⁷:

Ե. Չարենցն իր հանճարի շնորհիվ լայն ուղիներ բացեց հայ գրականության համար ու կանխորոշեց նրա հետագա զարգացումը: Փոխ առնելով Սայաթ-Նովայի ոճային և արտահայտչական հնարանքները, բանաստեղծության կառույցին Ե. Չարենցը նոր որակ էր հաղորդում: «Տաղարան» ժողովածուում արտահայտվում են ինքնաստիպ տրամադրություններ ու խոհեր, որոնք կրում են բանաստեղծի անհատականության և ժամանակի կնիքը: Սիմվոլիստական հատուկ հնչերանգներով է գրված Ե. Չարենցի «Քամին» բանաստեղծությունը, որի վրա զգալի է Էմիլ Կերիարնի խորհրդանշական պատկերների ազդեցությունը («Քամին, // աշնան քամին // թոցնում է դեղին նժույգները իրա»):

1.2. «Ասպետական» ռապսոդիայի «փոթորկածուփ» միստերիան»

Այս ենթազգլխում ևս անդրադարձել ենք Ե. Չարենցի բանաստեղծություններում սիմվոլիզմի պոետիկայի և գեղագիտության առանձնահատկությունների քննությանը: Ազգային ճակատագրի գերխնդիրը, պատանեկան վաղ տարիների ապրումները բանաստեղծին ստիպում են, որպեսզի «կապույտ հեռաստաններում» փնտրի ոգու փրկության ուղիներ, սիմվոլիստական «երանգապանակի»՝ «կապույտի», «ոսկեգույնի» և «մանուշակագույնի» հատկանշական եզերքները տանող ճանապարհները:

Երազների «կապույտ» հեռուներում է, որ բանաստեղծին երևում է «իրիկնային» քույրը, որը ճախրում է՝ «Որպես մի դողանջ, մի լուսե թիթեռ...», «տոգորված» ծիածանագույն ցլքերով: Նրա քնարական կերպարը բանաստեղծն արտացոլել է «Տեսիլածամեր» շարքի բանաստեղծություններում, որոնք էլ իրենց հերթին ներքին թելերով շաղկապված են՝ «Լիրիկական բալլադների»,

⁷ Գրական թերթ, 20 մայիսի, թիվ 17, 2011, էջ 2:

«Հրո երկիր» և «Ծիածանը» շարքի բանաստեղծությունների հետ. «Քո՛ւյր, գուցե՛ չկանք. // Գուցե մեկը,- ո՞վ // Երազել է մեզ // Անլույս գիշերով...» («Հրո երկիր»):

Սիմվոլիստ գրողների ստեղծագործություններում սիրո հավիտենականության «լեյտմոտիվն» առաջատար է դառնում: Գրական տարբեր ձևերի ու երևույթների նոր երանգավորումներով՝ տվյալ «լեյտմոտիվն» արտացոլված է նաև Ե. Չարենցի՝ «սիրո ողբերգականությունից» բխող «Ասպետականում», ուր գործողությունները ծավալվում են՝ «հավիտենական գոյի» ուղեծիրում, երկնայինի ու երկրայինի «ժամադրապահին», ինչը ևս սիմվոլիստական պոեզիայի յուրահատկություններից էր:

Սիմվոլիզմի պատկերային միջակայի համակարգում, «ինչին անհրաժեշտաբար անդրադառնալ է պետք՝ ժամանակի գերխնդիրն է կամ ժամանակային միջը, սակայն ոչ միջակայի ժամանակը, ինչը հավերժական ժամանակն է՝ երեք չափումների՝ անցյալի, ներկայի և ապագայի մեկտեղմամբ... («Օ՛, ժամանակ, քո՛ բուրգերը»): Ժամանակն ինքն է վերածվում միջի, իսկ մնացյալն, ինչ բովանդակում է ժամանակը, երկրորդական միջի, կամ միջի մեջ «միջի» արժեք է ստանում»⁸:

Ե. Չարենցի վաղ շրջանի սիմվոլիստական ստեղծագործություններում՝ «Մինչ «Հետերա-երազը» եղած երգերը «մենակ, հոգեվար մեռնող» անհատի հոգու ցավի երգեր են, անհատ, որն իր շուրջն զգում և «խմում է իջնող տագնապը մութի», տագնապը կյանքի, ցավի, տառապանքի վախը: «Հետերա-երազը» այս ամենի վերջերգն է»⁹: Ե. Չարենցիմի շարք ստեղծագործություններում երևակայական-գաղափարական հայրենիքի իդեալն է, որոնց քնարական հերոսը ժամանակի մեջ մտատանջվում է մարդու և հայրենիքի ճակատագրի մասին: Եվ՝ ի տարբերություն սիմվոլիստների, որոնց գործերում, ըստ ամենայնի, «համընդհանուր» հայրենիքի նախատիպն է, Ե. Չարենցի երկերում բորբոքվում են պատմական հիշողության կրակները:

Վերջապես՝ բանաստեղծի վաղ շրջանի ստեղծագործությունների պարագայում սիմվոլիզմը ժամանակավոր հրապուրանք է դիտվել, թե՛ գրական ինքնությունը հաստատելու, գրական երևույթները սահմանազատելու զորավոր միտում: Եվ ի՞նչ է տվել սիմվոլիզմը Ե. Չարենցի ստեղծագործություններին, արդյո՞ք այն զարգացում է ունեցել բանաստեղծի հետագայում գրված ստեղծագործությունների մեջ: Այս բոլորը մեր ուսումնասիրության առաջադիր խնդիրներից են և տվյալ ենթազվիտում փորձել ենք ցույց տալ, որ սիմվոլիզմը Ե. Չարենցի հետագա ստեղծագործությունների մեջ չի ունեցել ընդգծված զարգացում:

⁸ Տե՛ս Գրեթերթ, 27 հունիսի, թիվ 2, 2013, էջ 7:

⁹ Նարցիս, Գրական-մշակութային հանդես, թիվ 2, 2010, էջ 87:

Բանաստեղծը հետագայում սիմվոլիստական ուղղությունը համարեց «գրական միանգամայն մեռած մի դպրոց»: Սիմվոլիզմը միմիայն Ե. Չարենցի վաղ շրջանի ստեղծագործությունների վրա ունեցավ ազդեցություն («Երեք երգ...», «Հրո երկիր», «Տեսիլաժամեր», «Ծիածանը», «Կապուտաչյա հայրենիք») և շուտով էլ հաղթահարվեց նոր ուղղության՝ ֆուտուրիզմի առաջացումով: Ե. Չարենցի քնարական հերոսը մտատանջվում է մարդու և հայրենիքի ճակատագրի մասին: Այսպես, «Կապուտաչյա հայրենիք» պոեմում ռեալիստական պատկերները զուգադրվում են սիմվոլիզմի երևակայական պատկերներին: Հազարամյա վանքը, նրա շուրջը բազմաժողով հաղթ կաղնիները, հորիզոններում փրփրացող գետերը, «ցորենի արտերի շշուկները» դյուբի՛ս՝ ամբողջացնում են բանաստեղծի ֆանտաստիկական մտատեսիլը:

1.3. «Չարենցյան սիմվոլիստական գույների «նրբագծերն ու նրբերանգները»»

Այս ենթագլխում զուգահեռներ ենք անցկացրել Ե. Չարենցի և սիմվոլիստ բանաստեղծների ստեղծագործությունների միջև, որոնց վրա մեծ ազդեցություն ունեցավ Շառլ Բոդլերի «գույների, բույրերի և հնչյունների» գեղագիտական տեսությունը: Նամակներից մեկում բանաստեղծը գրում է հետևյալը. «...ենթադրում եմ, որ իմ աչքերի առաջ՝ պաստառի վրա, կա մուգ կարմիր գույնի մի ընդարձակ տարածություն: Եթե այդ կարմիրը ներկայացնում է կիրքը, ապա ես տեսնում եմ, որ աստիճանաբար, կարմիրի և վարդագույնի բոլոր անցումներով այն գալիս հասնում է հնոցային շողարձակ սպիտակության: Թվում է դժվար, նույնիսկ անհնարին կլիներ հասնել ավելի պայծառ, ավելի հրավառ ինչ-որ բանի. և սակայն մի վերջին շողարձակում գալիս գծում է առավել սպիտակ մի ակոս այն սպիտակի վրա, որը հեռապատկեր է ծառայում դրան»¹⁰:

Ե. Չարենցի բանաստեղծություններում «կապույտ» գույնը հարադրվում է նաև «կապուտաչյա Սիրուիու»՝ հայրենիքի հետ («Կապուտաչյա հայրենիք»): «Կապույտի» տեսիլքն այժմ փոխակերպվել է համապատասխան իրականություն.

Երկնքից-երկինք, իրիկվա մովում,
անմարմին, անտես – ճախրել ու գնա՛լ...
Դեպի Ամենտի եզերքը կապույտ –
քո՛յր, դողանջի պես ճախրել ու գնալ...
(«Գագելներ»)

¹⁰ Անդին, Գրական-գեղարվեստական ամսագիր, Ե., 2014, թիվ 7, էջ 101:

Խուան Հիմենեսի պոեզիայում կապույտ գույնը «երկնային երաժշտությունն» է խորհրդանշում («Երկնի կապույտն ահավոր է: // Սև է այնքան: // Սևավոր է օրը ամռան: // Ահավոր է»), իսկ Ե. Չարենցի բանաստեղծություններում «կապույտը» (նաև՝ «լազուրը» և «մովը»)՝ «աղոթք» է, «թախիծ» և «կարոտ» թափանցիկ, մաքուր»։ «Ու վարդարանը քո հին՝ հեռավոր հուշի // - Ճառագայթի նման բիլ՝ իմ լազուր հոգում // թափում է հի՛ն կարոտի մի կապույտ փոշի...» (Ե. Չարենց)։ Ժ. Մարիա դը Հերեդիայի պոեզիայում գլխավորապես աչքի է ընկնում բանաստեղծական տողի ռիթմային կառույցն ու նրա հնչակա- նությունը։ «Ամեն գիշեր գերբնական այգին էին ծարավի. // ֆոսֆորափայլ կապույտը հասարակած մեծ ծովի // դյուրում էր քունը նրանց միրաժներով ոսկեգույն...» (թարգմ.՝ Ա. Ալիքյանի)։ «Կապույտի» մեներգը Ս. Եսենինի պոեզիայում խորհրդանշվում է մարդու և բնության ներդաշնակությամբ։ «Քեզ չեմ մոռանա, // Ես քեզ եմ հիշում // Այն տարիները հեռու չեն այնքան, // Որ աղմկեցին կապույտ մշուշում» (թարգմ.՝ Հ. Թամրազյանի)։

Չուգահեռ անցկացնելով էքսպրեսիոնիզմի ներկայացուցիչներից մեկի՝ Գերոզ Թրակլի ստեղծագործությունների հետ, նշենք, որ նրա պոեզիայում ևս արտացոլված է «գունային» սիմվոլների խորհրդանշական տարապատկերը։ Նրա պոեզիան իր մեջ ամփոփում է բանականության ներշնչումի երկու տա- րատեսակների գեղագիտական փորձը՝ առասպելաբանական և խորհրդածա- կան-հայեցողական իմաստավորման անկասելիությամբ։ Ահա «կապույտի» խորհրդանշական պատկերը բնորոշող տողերը.

«Հոգին օտար է երկրի վրա: // Հոգևոր մթնշաղվում է կապույտը փակ անտառին, // և մթին մի գանգ է երկար ղողանջում...» (թարգմ.՝ Հ. Մովսեսի)։

Ե. Չարենցի երկերում խորհրդանշական է «կապույտի», «ոսկեգույնի» և «մանուշակագույնի» քնարական պատկերակերտումը, որ «ուղղակի և անուղղակի համեմատություններով, մակդիրների և «գույների խտացումով» արտացոլվեց նրա «աստեղային» սիրո հեքիաթի մեջ («Ծիածանը», «Հրաժեշտի երեկոն», «Գազելներ»)։ Բանաստեղծի ստեղծագործությունների գունային համակարգում գերակշռող է նաև «կարմիրը»՝ «կարմիր կանթեղ», «կարմիր արև», «կարմիր պոետ», «կարմիր քուրա», «կարմիր նժույգներ», «կարմիր Նաիրի» և կարմիր գույնը բնորոշող մի շարք այլ փոխաբերություններ ու մակդիրներ, ինչը հատկապես ֆուտուրիզմի հիմնաշրջանի բանաստեղծական գույնն է, սակայն յուրատեսակ շարունակությունն է հանդիսանում «Ծիածանը» ժողովածուի գունային «երրորդության»։ Կարմիր գույնը խորհրդանշում է՝ ընդվզումը. «Օդն է ճեղքում գահավիժող աղավնին, // կարմիր ահի բոց թափելով իր վերքից, // լեզվակները ազդարարում են մարմնին // ազատումը մեր ախտերից, մեղքերից...» (Թ. Էլիոթ) և՝ «Քո ամբողջ անցյալն անծայրածիր, // միջնադարից ձգվող մինչև այսօր՝ // պատկերել են սև և բոսոր, որպես // խավար արյուն թավշի միջից հոսող...» (Ե. Չարենց)։

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ. ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑԸ ԵՎ ՖՈՒՏՈՒՐԻՉՄԸ 2.1. «Պոեզիայի նոր կողմնորոշման չափորոշիչները»

Ատենախոսության երկրորդ գլուխը խորագրել ենք՝ «Եղիշե Չարենցը և ֆուտուրիզմը», վերլուծելով նշված ուղղության ազդեցությունը Չարենցի տարաբնույթ երկերում: Պետք է նշել, որ Թ. Մարինետտիի «Ֆուտուրիզմի մանիֆեստը» բոլոր ֆուտուրիստների համար դառնում էր նոր չափանիշների ճշգրտման և դարի գրական առաջընթացը նոր հունի մեջ գցելու ուղեցույց: Ֆուտուրիստական «հրովարտակից» մեջբերենք մի քանի պատկերավոր դրույթներ. «1. Արիությունը, խիզախությունը, ընդվզումը կազմելու են պոեզիայի հիմնական տարրերը: 2. Մինչ օրս գրականությունը գովերգել է մտախոհ անշարժությունը, գերզմայլանքն ու քունը: Մենք միտված ենք գովերգելու ագրեսիվ շարժումը, տենդային անքնությունը, սրընթացությունը, մահաթռիչքը, ապտակն ու բռունցքը: 3. Մենք պնդում ենք, որ աշխարհի շքեղությունը հարստացել է մի նոր գեղեցկությամբ, այն է՝ արագության գեղեցկությունը: Մրցարշավի մեքենայի ծածկոցը՝ զարդարված մեծ խողովակներով, որոնք հիշեցնում են հրաշունչ օձերին... և մի շառաչող մեքենա, որն ընթանում է ասես փամփուշտի արագությամբ, ավելի գեղեցիկ է, քան Սամոթրակեցի Նիկեի արձանը»¹¹:

Հայ գրականությունը «նեոֆուտուրիստական» տեսանկյունից «թոքախտավոր» էր հռչակել «Երեքի» դեկլարացիան, սակայն «Երեքը» դեռևս չէին նկատում, որ կողքից դիտողների համար նրանց գրական գործունեությունն ընկալվում էր որպես գրական-գեղարվեստական մտքի անկում, «ընդօրինակում մոսկովյան ֆուտուրիստներին»: Այդ բոլորով հանդերձ նրանց քնարերգության ամենաբնորոշ հատկությունը բոլորովին նոր ձևն ու անսովորությունն էին՝ օժտված հեղափոխական դարաշրջանի ոգով: «Երեքի» դեկլարացիայի հեղինակները պահանջում էին գրողներից՝ «դուրս հանել բանաստեղծությունը սենյակներից դեպի փողոցներն ու մասսաները և գրքերից դեպի կենդանի խոսքը»:

«Ժամանակի եղջերափողը մեր միջոցով շեփորում է գրական արվեստում», - ասում էին ռուս ֆուտուրիստները: Անցյալը թվում էր արդեն նեղ նրանց համար, իսկ ակադեմիան և Պուշկինը հիերոգլիֆներից ավելի անհասկանալի են: Իտալական ֆուտուրիզմի ներկայացուցիչները հստակորեն պարտադրում էին՝ «ապշեցուցիչ հարվածներով արթնացնել նեկտարի ու նիկոտինի թույնից թմրած օրգանիզմները»¹²: Գաղափարական տեսանկյուններից տարբեր էին Թ.

¹¹ Արտասահմանյան գրականություն, Թարգմանական հանդես, Ե., 2015, թիվ 3, էջ 55:

¹² Կարմիր աստղ, 6 հունվարի, Թիֆլիս, 1923, թիվ 4, էջ 2:

Մարինետտի «Ֆուտուրիզմի մանիֆեստը», ռուսական ֆուտուրիզմի՝ «Ապտակ հասարակական ճաշակին», հրովարտակը և Ե. Չարենցի հոչակած «Երեքի» դեկլարացիան: Իսկ նրանց միջև առկա ընդհանրությունը՝ դասական մշակույթի ժխտումն էր:

Ուլյա Ուիթմենի և հատկապես՝ Էմիլ Կերիարնի («արդիականության Դանթեի») ու Վլադիմիր Մայակովսկու արդի բանաստեղծական ավանդույթների օրինակով՝ Ե. Չարենցը շաչեցնում է իր երգերի «շաչող մտրակը»: Բանաստեղծի երկերում ֆուտուրիզմի նորընծա գաղափարների «հայտնագործումը» կյանքի ու աշխարհի հանդեպ ժողովրդական հայացքների ամրապնդումն է: Այս ամենի համատեղմամբ՝ բնական պետք է համարել բանաստեղծի ֆուտուրիստական երկերի «շփոթ» ու «աղմկահար» լինելը. «Եվ թող երգեմ ես այն իմ շառաչուն երգով // Լեռնացունը այս վեհ, այս չմարող // Արեգակը՝ վառված այս երեկո՝ // Անեգրական կամքի անմարելի հրով» («Գալիքի որմնադիրները»):

Ե. Չարենցի մի շարք ստեղծագործությունների տաղաչափական ընդհանուր բնութագիրը հետևյալ կերպով է բնորոշել Ա. Կարինյանը. «Թոփչքներից հետո, մեծ գործերից հետո «Պոեզոգուտնայի» երևան գալը նշան է այն միջնաշրջանի, որը միանգամայն բնական է անցյալ և ապագա բանաստեղծական վերելքների սահմանագծում: «Պոեզոգուտնան» Չարենցի նոր նվաճումների փաստաթուղթն է, նորանոր նվաճումների գրավականը: Իսկ տերյանական հովերից ազատագրվելու փաստը պասկվեց երկու խոշոր և իրար չնմանվող գործերով, ինչպես «Ամենապոեմն» ու «Ասպետականը»¹⁰: Այս բնորոշումների հետ մեկտեղ հարկ է հավելել նաև, որ արտասահման կատարած ճանապարհորդությունների ընթացքում բանաստեղծը գրեց նաև «Էլեգիա, գրված Վենետիկում», «Ստամբուլ», «Կոմունարների պատը...» և ուրիշ գործեր, որոնց մեջ օգտագործեց համաշեշտ ոտանավորի, ինչպես նաև միջազգային պոեզիայի մի քանի այլ տեսակներ:

2.2. «Պոեզիայի «նոր լեզուն ու դիմերը, նոր հանգերն ու չափը»»

Այս ենթագլխում փորձել ենք համեմատության եզրեր գտել Ե. Չարենցի և Վ. Մայակովսկու ֆուտուրիստական հայացքների միջև: Ե. Չարենցի գրական ուղին աստիճանաբար հատվում է նոր ձևավորվող հոսանքին՝ ֆուտուրիզմին և որին բնորոշ գործերում բանաստեղծական տողի «անջատվածությունն» ու «հատվածայնությունը» պայմանավորվում էր նրանում արտացոլվող տարածազման փոխաբերություններով: Այսպիսով, «Պոեզոգուտնա» ժողովածուում արձարծելով «Երեքի» դեկլարացիայի և դրա վերաբերյալ գրական ելույթներում ու հոդվածներում առաջ քաշած իր տեսական դրույթներն՝ Ե. Չարենցը ձգտում էր նոր հունի մեջ գցել գրականությունն ու պոեզիան, ստեղծել տվյալ

¹³ Պայքար, 15 հունվարի, Ե., 1923, թիվ 1, էջ 14:

դարաշրջանի ոգուց բխող բանաստեղծական մտածողություն և արտահայտչական միջոցներ:

Վ. Մայակովսկու հեղափոխաշունչ բանաստեղծության նեոֆուտուրիստական նվաճումները բարձր էին գնահատվում Ե. Չարենցի կողմից («Նա սիրում էր մեռնող քաղաքների տենդը // և պատկերներ զարհուր և հռնդուն երգեր...»): «Տազնապած քաղաքներում» ֆուտուրիստներին հետաքրքրում էր «արագացված հաղորդակցական տարածականությունը». «Մեքենայական ինքնաշարժությունը կլանում է ոգին: Խորանարդ և անկյունավոր ձևերը խմորում են հոգին ըստ հսկա նավամատույցների, կավախառն ճանապարհների և երկրաչափական քաղաքների պատկերին: Մարդը մաս է կազմում հսկա մեքենայության...»¹⁴:

Վ. Մայակովսկին տուրք էր տալիս քնարական և էպիկական բանաստեղծության բարդ կառուցվածքին: Նրան մտահոգում էին նաև պոեզիայի ժանրային ձևերը, որոնք արտացոլում էին «ուրբանիստական» և «հարաշարժության» գաղափարները: Ուրբանիզմն այս կամ այն չափով իր արտացոլումը գտավ նաև Ե. Չարենցի երկերում: Ֆուտուրիստական ստեղծագործություններին համապատասխան ձևով Ե. Չարենցը ճշգրտորեն «միահյուսում» է մեծ քաղաքների սրընթաց արագությունը և քաղաքային իրականության նկարագիրը:

Յուրովի են ստեղծել գրական իրենց հրովարտակները «Երեքի» դեկլարացիայի և «Լեֆի» հեղինակները, որոնք իրենց ֆուտուրիստական ստեղծագործություններում լայնորեն կիրարկում էին ուիթմենյան ազատաչափի բանաստեղծական ավանդները:

«Լսենք Մայակովսկուն.

- Մենք ցրեցինք հին բառակույտի փոշին,
- Մենք չենք ուզում ճանաչել տարբերությունը պոեզիայի, պրոզայի և պրակտիկ լեզվի մեջ,
- Մենք աշխատում ենք լեզվի հնչյունների կազմության, ուիթմի պոլիֆոնիայի, բառային կառուցվածքի պարզության, լեզվային արտահայտելիության նրբացման վրա,
- Հների պոեզիան և պրոզան հավասար չափով հեռու էին՝ պրակտիկ խոսքի, փողոցի ժարգոնի, գիտության ճիշտ լեզվից...»¹⁵:

Այժմ որպես զուգահեռ մեջբերենք «Երեքի» դեկլարացիայի հրահանգ-կոչերը:

«Մեր օրվա լուզունգն է.

¹⁴ Չարյան Կ., Անցորդը և իր ճամբան, Ե., 2010:

¹⁵ Մարտակոչ, 26 հունիսի, Թիֆլիս, 1923, թիվ 101, էջ 2:

- Կորչե՛ն գրական արհեստկրատ շկոլաները, առանձնասենյակային գրողները, գրադարաններում ննջող գրքերը և սալոնային կանայք:
- Կե՛ցցե գեղարվեստական կենդանի խոսքը, ստեղծագործող բազմություններում:
- Կե՛ցցե ստեղծագործող բազմությունը իր հզոր ռիթմով:
- Կե՛ցցե պրոլետարական հեղափոխությունը»¹⁶:

Ֆուտուրիզմն, այդպիսով, առաջադրում էր «յուր նոր լեզուն, ռիթմերը, հանգերն ու թափը»: Ըստ Գ. Անանյանի՝ «Գանգրահեր տղան» չափածո նովելում, Չարենցը վերականգնում էր նախորդ շրջանի իր կորուստներից մեկի՝ իրականության քնարական ընկալման սկզբունքը: Ավելին՝ աղմուկի ու ծնծղանների, երկաթի ու մեքենայի երգի մեջ բանաստեղծը կարոտում է ոչ միայն սրտամոտ երգին, այլև «ոգի սրբող, բայց չկրծող» այն թախծին, որ ստեղծագործող է ավելի, քան չափազանցված խնդությունը: Ե. Չարենցը թմբուկային «դատարկ աղմուկին» և պղնձե «շաչող շառաչին» հակադրում է վեհ գաղափարների ու վառ զգացմունքների ճշմարիտ պոեզիան:

2.3. «Սիմվոլիզմը «հեղափոխական ֆուտուրիզմի» խառնարանում»

Այս ենթագլուխը նվիրված է Ե. Չարենցի գրական-ստեղծագործական զարգացման նոր ուղուն: Բանաստեղծը նոր երգերով է գնում դեպի ապագա, դեպի այն ժամանակները, երբ «աշխարհը կդառնա // Մի փոքրի՛կ, փոքրի՛կ փողոց... // Ուր ապրում են ողջ աշխարհում... // Համոն, // Մի Կարո, // Մի Պողոս» («Ամենապոեմ»): Ինչպես, որ բոլոր ֆուտուրիստներն իրականության վերաբերյալ իրենց երկերում ու հրովարտակներում, Ե. Չարենցն «Ամենապոեմում» նույնպես առաջադրում է նոր պատկերների ու կերպարների կերտման իր ուրույն ձևը: Պոեմը Ե. Չարենցի «գրական գործունեության նոր էջն է կազմում, որով նա իրավամբ կարող է հեղափոխական լայն թափի բանաստեղծ համարվել ոչ միայն գրվածքի նոր բովանդակությամբ, այլև ապագա պրոլետարական պոեզիայի մի շարք նոր ձևերի տարրերով: Ամենապոեմը շտրիխների մի շարան է, ուր բանաստեղծը ռելիեֆ գծերով պատկերել է 20-րդ դարի ամենամեծ էպոպեան-համաշխարհային պատերազմից՝ մինչև հեղափոխությունն ու քաղաքացիական դաժան կռիվները, հյուսելով այդ մեծ անցքերի հետ նաև իր հայրենի Նայիրյան երկրի պատմական դեպքերը»¹⁷: Ե. Չարենցը հակադրության մեջ է մտնում սիմվոլիստների հետ և ֆուտուրիստ բանաստեղծների օրինակով ժխտում է հին արվեստը, խղճահարությամբ է լցվում Գ. Մահարու սրնգահարի հանդեպ, մարդկանց,

¹⁶ Չարենց Ե., Երկերի ժողովածու 6 հատորով, հ. 6, Ե., 1967, էջ 554:

¹⁷ Նոր աշխարհ, Թիֆլիս, 1922, թիվ 2, էջ 105-106:

ովքեր դեռ այս հրաշունչ օրերում՝ «Դռների ետևում // Ուզում էին «Ռանգի», // Ուզում էին - «Տասչորս»» («Սրինգը»):

Իսկ ահա «Գյումրի» և «Շոգեգալուստ» բանաստեղծություններում Ե. Չարենցն իր տեսակետն է արտահայտում սիմվոլիստական և իր օրերի պոեզիայի մասին: Մի դեպքում՝ «Ամենո՛ր, ամենո՛ր, ամենո՛ր // Հիմա այդ երգն է անողոք // Պատգամի նման մի անհուն», մեկ այլ դեպքում՝ «Դեռ փչում է հին եռանդով // Ալեքը իր զուռնան թմրիչ»: Ե. Չարենցը պոեզիայի մեջ ներմուծում էր խոսակցական լեզու, գործածում էր բարբառային բառիմաստներ և ավելի մեծ տեղ էր հատկացնում «հատած տողերին», կրկնություններին ու «ընկնող ռիթմերին»:

Ռուսական ֆուտուրիզմն, ի հեճուկս, իտալական ֆուտուրիզմի ժխտում էր պատերազմի ներբողումը. «Ռուս ֆուտուրիստները վերջնականապես ծվեն-ծվեն արեցին Մարինետտիի իմպերիալիստական գաղափարագարությունը, սուլելով նրան արդեն 1913 թվականին, Մոսկվա այցելության ժամանակ: Ֆուտուրիստներն առաջինն էին և միակը ռուսական արվեստում, ովքեր հեգնեցին պատերազմը գովերգողների շառաչումները (Գորոդեցկի, Գումիլյով և ուրիշներ), նզովեցին պատերազմը, մարտնչեցին նրա դեմ արվեստի բոլոր տեսակի զենքերով (օրինակ, Մայակովսկու «Պատերազմն ու աշխարհը» պոեմը): Պատերազմն, այդպիսով, սկզբնավորեց ֆուտուրիստական մաքրագործման ընթացքը: Պատերազմը նաև հարկադրեց տեսնել ապագայի հեղափոխությունը (Մայակովսկի, «Վարտիկավոր ամպը»): Փետրվարյան հեղափոխությունը խորացրեց ֆուտուրիստական մաքրագործման ներընթացքը՝ պառակտելով ֆուտուրիզմը «աջ» և «ձախ» մասերի»¹⁸:

Ե. Չարենցի ֆուտուրիստական ստեղծագործությունների մասին ժամանակի մամուլը գրում էր, որ «Փետրվարի 19-ին Երևանում՝ Տիգրան Հախումյանը կարդաց մի դասախոսություն, «Եղիշե Չարենցի ստեղծագործությունը» նյութի մասին: Նա շեշտեց, որ Ե. Չարենցի «Ռոմանս անսերը» և «Պոեզոզուռնան» նոր հորիզոններ են բաց անում հեղինակի ստեղծագործության համար: Դասախոսը հայտարարեց, որ «Ռոմանս անսերը» մի հեղափոխական գեղեցիկ գրվածք է: ...որ Չարենցը սայթաքել է և նրա «Ռոմանս անսերը» այժմ կարող է առաջ բերել հակահեղափոխական տրամադրություններ, որովհետև նա «կիրքը», «կոնքը», «կինը» խառնում է Կարմիր Հոկտեմբերի հետ»¹⁹: Ընդամին, «Ռոմանս անսերի» բովանդակությունը նորություն էր հայկական պոեզիայում ոչ միայն շեշտերով, բառով և արտահայտչականությամբ, այլև՝ բանաստեղծական արվեստի անժխտելի վավերականությամբ:

¹⁸ Маяковский В., Война и язык, СПб., 2019, էջ 202:

¹⁹ Մուրճ, Բ տարի, Ե., 1923, թիվ 4, էջ 34:

Ե. Չարենցը պոեզիայի մեջ բերում էր «երկաթե երգի» հանգերն ու ռիթմերը և հնչեցնում՝ «խնդության երգեր»: Արդ, «տաղաչափական» և «պատկերային» ձևերի բազմազանության, «ռեալիստական սկզբունքների» որդեգրման տեսակետներից Ե. Չարենցի պոեզիան հայ գրականության մեջ մինչև այժմ մնում է չգերազանցված:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ. ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑԸ ԵՎ ՄՈՂԵՌՆԻՉՄԸ

3.1. «Ձևերի ու ոճերի բազմազանությունը և պոետիկան»

«Եղիշե Չարենցը և մոդեռնիզմը» երրորդ գլխում քննության են առնված Ե. Չարենցի գործերում մոդեռնիզմի մի շարք դրսևորումները: Պոլ Վալերիի մեկնությամբ՝ «Բոլոր լուսավոր ուղեղներում խիստ տարաբնույթ գաղափարների, կյանքի ու ճանաչողության ամենահակադիր սկզբունքների ազատ համագոյակցումը. սա է մոդեռն դարաշրջանի հատկանշական գիծը: Ես չեմ խուսափում «մոդեռն» հասկացության ընդհանրացումից և այն որոշակի կենսակերպի համար կիրառելուց՝ *ժամանակակից* հասկացության զուտ հոմանիշ դարձնելու փոխարեն» (տե՛ս «Ոգու քաղաքականություն»): Ստեղծագործական կյանքի ամբողջ ընթացքում Ե. Չարենցը մշտապես որոնել և կիրառել է տաղաչափության նորանոր ձևեր և ոճաձևեր, ինչը նրան տանում էր արվեստի կատարելագործման բարդ ճանապարհով («Լեֆյան թմբուկը թողած մի կողմ, // Հատվող տողերը նետելով դե՛ն, // Առնում եմ յամբ ես ու քողաղոտ,...»): Բանաստեղծը յուրովի է շարունակում համաշխարհային պոեզիայի ավանդույթները, որոնք էլ անշուշտ, համապատասխանում էին արդիականության պահանջմունքներին:

«Ձևերի ու ոճերի բազմազանությունը և պոետիկան» ենթագլխում զուգահեռներ ենք անցկացրել մոդեռնիզմի գեղագիտությունն արտացոլող բանաստեղծների և Ե. Չարենցի գրական մի շարք ստեղծագործությունների միջև՝ դիտարկելով մեկ «հոգևոր տարածականության» տիրույթում.

Օ՛, քաղաք իմ գնչուական,
ո՞վ քեզ տեսնի, բայց չսիրի՛,
թախիճների, մուշկի քաղաք
ու դարչնագույն ամրոցների:

(Գ. Լորկա)

Մնաս բարո՛վ քաղաք գործի,
աշքատանքի մայրաքաղաք,
մաքառումի միապաղաղ ու
հավիտյա՞ն ստեղծագործիչ:

(Ե. Չարենց)

Արդի մոդեռնիստական ուղղության գեղագիտական մի շարք դրսևորումներն իրապաշտության համատեքստում նկատելի են նաև Պատվ Յելանի պոեզիայում, որոնք առնչակցվում են դասական գիտակցականության մտավոր ենթաշերտերին, և դրանով ահա պայմանավորված, ինչի էությունն, ըստ ամենայնի, նորեվրոպական մետաֆիզիկայի տեսանկյունից արդ՝ հանդիսանում է մտապատկերը՝ հարաճում է առարկաների դրության և

դիմակայության նշանակության: Եվ որքան բարձր է գիտակցականության աստիճանն, այնքան՝ գաղափարական միավորն՝ էլ ավելի է մերձենում բանականության գործունեությանը. «Վարսանդով առ պայծառ հոգին, առէջքով առ // ամայի երկինք և պսակով՝ կարմրած պուրպուր // բառից, որը մենք երգեցինք վերևում, վերևում փշի՛» (թարգմ.՝ Հ. Մովսեսի):

Բուրժուական հասարակության մեջ ապրող մոդեռնիստները գրականության մեջ ներմուծում են նաև նոր տեսակի բառապաշար՝ ռադիո, հեռագիր, ինքնաթիռ, գնացք: Ե. Չարենցի ֆուտուրիստական բնույթի ստեղծագործություններում այդ բոլորը՝ «պողպատի», «էլեկտրաուժի», «երկաթե մկանների», «էլեկտրական բորբ հոսանքների» գովքի արտահայտությունն են, որոնք հանդիսանում են բանաստեղծի ֆուտուրո-մոդեռնիստական նորակազմ բառերի հնչյունական առանձին միավորները: Համանման պատկերների հանդիպում ենք Ե. Չարենցի «Ամենապոեմ», «Խաղաղության ռադիո», «Երգ ժողովրդի մասին», «Բրոնզե թևերը կարմիր գալիքի» և այլ գործերում: Ռադիոն, հեռագիրը, տանկը, թնդանոթը, գնդացիրը մոդեռնիստ բանաստեղծների համար վերածվում են խորհրդանիշների՝ արտացոլելով նոր օրերի շունդալից դիթերը և տեխնիկական դարաշրջանին բնորոշ նախանշանները: Պոեզիայում նորակազմ բառային միավորներն արտացոլվեցին նաև Վ. Մայակովսկու հեղափոխությամբ «կանչված ու կոչված» պոեմներում. «Արճիճ-ծանրությամբ // ոտանավորներն են կանգնած, // պատրաստ և՛ մահվան, // և՛ անմահ փառքի: // Պոեմներս են քարացել // երախները բաց, // նշան բռնած վերնագրերի // թնդանոթափողերն իրարու սեղմած» («Ամբողջ ծայնով»):

Ե. Չարենցն, որպես հակակշիռ պառնասական «էմալի» գեղագիտությանը՝ «մադրիգայ» է ձոնում ֆուտուրիզմին.

Իսկ եթե հույսերից իմ այս վառ
իմ սրտում պիտ մնան վերքեր –
ես էլի՛ քո փառքը կերգեմ,
իմ հզո՛ր, երկաթե՛ եղբայր:
Կերգեմ քո կռիվը մեծ,
աշխատանքդ հզո՛ր, անձի՛ր,-
այս պոեմս – քո կա՛մքը երգեց,
այս պոեմս – դո՛ւ երգեցիր:

(«Ամենապոեմ»)

3.2. «Իրապաշտական պոեզիայի ժանրային «պատկերասրահը»»

Այս ենթազխում քննվում են մոդեռնիստական ուղղություններից մեկի՝ իրապաշտության ժանրային առանձնահատկությունները: Մոդեռնիզմի թեմատիկ ուղղություններից էր նաև այսպես կոչված ուրբանիզմը («քաղաքերգություն»), որն իր արտացոլումն էր գտել նաև հայ գրականության մեջ, ինչպես օրինակ՝ Վահան Տերյանի և Դանիել Վարուժանի բանաստեղծական շարքերում:

«Քաղաքի» պատկերն արտացոլված է նաև Ե. Չարենցի՝ «Ամբոխները խելագարված», «Էլեգիա, գրված Վենետիկում», «Մահվան տեսիլ» գործերում, իսկ «Երկիր Նաիրի» վեպում բանաստեղծը անտիկ հեղինակների ոճով ու ռիթմական նմանողությամբ է, կարծես, կերտել «նաիրյան» արևային քաղաքի դիմապատկերը: Քաղաքերգություն թեման լայն տարածում էր գտել մոդեռնիստական պոեզիայում: Զուգահեռաբար մեջբերենք Գ. Լորկայի բանաստեղծությունից մեկ հատված, որը մոդեռնիստական պոեզիայի լավագույն օրինակներից կարող է համարվել. «...լույսը քո հագին՝ // բացվել ես, ինչպես // կակաչն ահագին: // Լուսե քո նավով // լողում ես ահա՝ // մակընթացության վրա // քաղաքի՝ // բյուրեղ սասողերի // ու սատների միջով աղեկեզ» (թարգմ.՝ Ֆ. Կիրակոսյանի):

«Քաղաքի» գեղարվեստական պատկերավորումը Եղիշե Չարենցի պոեզիայում ունի բազմաբնույթ նկարագրություններ: «Այսպես, հիմնվելով Ուելսի, Հյուգոյի և Ռեմբոյի գաղափար-խորհրդանիշների վրա, միաժամանակ՝ նաև կանխագուշակելով դասակարգային պայքարի մոտալուտը, ինչը հնարավոր է և ոգեշնչել՝ ուրիշ այլոց, ֆուտուրիստական հիմնավեպերի ստեղծագործական մտահղացման ընթացքում, Մարինետտին, այդպես, իր գեղարվեստական երկերում վստահորեն պատկերում է ապագայի արդյունաբերական քաղաքի նկարագրությունը՝ կառուցված ռիթմային բարեհնչյունության խստագույն սկզբունքների հիման վրա»²⁰: Պատկերավորման մի շարք ոճային կողմերով «Դանթեական առասպել» պոեմն առնչվում է նաև սիմվոլիզմի գեղագիտությանը: Հետևյալ «տեքստային» տողերի խայտաբղետությունը, կարծես, նույնանում է ֆուտուրիզմի ռիթմական միավորների հնչողությանը.

Մեռած Քաղաքի ավեր շենքերում՝
ամբոխվել էին տեսիլներն ահեղ,
խեղերի նման ցատկոտում, պարում
ու դառնում էին մեռելներ մի տեղ՝
սատանայական տենդոտ շուրջպարում:

(«Դանթեական առասպել»)

Մոդեռնիստական պոեզիայում արդիական հնչեղություն ուներ նաև «ամբոխի» թեման: Այստեղ հետաքրքիր է հիշել, որ ««Ամբոխները» արձակ բանաստեղծության մեջ Շառլ Բոդլերը հավասարաթեք փոխարկելի բառեր է համարել բազմություն և առանձնություն բառերը բանաստեղծի համար՝ նշելով, որ՝ «ով չգիտի լցնել իր առանձնությունը, չգիտի նաև լինել մենակ բազմազբաղ ամբոխի մեջ»²¹: Եվ այսպես, եթե «ամբոխը» մոդեռնիստ գրողների ստեղծագործություններում «հախուռն» և «անկազմակերպ» մի ամբողջություն է, որը, տակավին, «ոչ թե իբրև պատկերային վերարտադրություն, այլ իբրև՝

²⁰ Pizzi K., Italian Futurism and The Machine, Manchester, 2019, p. 61.

²¹ Բոդլեր Շ., Փարիզյան ձանձրախոս, տե՛ս «Առաջաբանը», Ե., Ամարաս, 2010, էջ 13:

«Ժամանակի առանձին պահի մտավոր-հուզական բարդությի վերարտադրում»» է, ինչպես օրինակ՝ Էզրա Փաունդի տողերում. «Ամբոխի միջի այս դեմքերի տեսիլքը. // Թաց, սև ճյուղի թերթիկներ» (թարգմ.՝ Ս. Մկրտչյանի): Ապա այդ տեսակետից Ե. Չարենցի ստեղծագործություններում «ամբոխը» որոշակի գաղափարի շուրջ համախմբված, միասնական նպատակ հետապնդող մարդկանց միասնությունն է, «ավերող ու արարող» հզոր ուժ: Եվ ըստ այդմ, բանաստեղծի ոգևորության աղբյուրն է հանդիսանում «բազմությունը» ու Եղիշե Չարենցը «հատու» դիտոնանսներով է արդ՝ վերամարմնավորում նրա հոգեբանական, «ապոկալիպտիկ» պատկերը. «Բանվորական թաղերը խավարում – // լսո՞ւմ եք – // աղմկում են, // խոսում են: // Որպես վրեժ մի ալ – // հոսում է այնտեղից սարսափը // դեպի էտուալ («Կոմունարների պատը Փարիզում»):

Ե. Չարենցը բանաստեղծական նոր էջ բացեց «համաշխարհային պոեզիայում»՝ Ռիլկեի, Էլիոթի, Ջոյսի, Վալերիի, Մայակովսկու, Փաունդի հետ միաժամանակ: Ի թիվս այլ «արդիապաշտ» բանաստեղծների՝ իրապաշտական հայացքները լավագույնս դրսևորվեցին նաև Ե. Չարենցի և Գ. Լորկայի երկերում: Հետևապես, սիմվոլիզմը, ֆուտուրիզմը և իրապաշտությունը, որոնք 20-րդ դարի պոեզիայում, ինչպես և արձակի մեջ թերևս կարևորագույն ուղղություններից են հանդիսանում, զարգացման իրենց բնորոշ առանձնահատկություններով նշանակալի ազդեցություն ունեցան համաշխարհային գրականության ու գրականագիտական մտքի զարգացման վրա:

3.3. «Եղիշե Չարենց և Գարսիա Լորկա. գրական փոխազդեցություններ»

Ատենախոսության երրորդ ենթազուվար նվիրված է Ե. Չարենցի և Գ. Լորկայի ստեղծագործությունների զուգահեռ վերլուծությանը: Իսպանական բանահյուսության մոտիվները Գ. Լորկայի բանաստեղծություններում ձեռք են բերել արդիական գծեր և հիմք են հանդիսացել՝ նորովի վերստեղծել իրականությունը: Նրա բանաստեղծական «ամենատարբեր» բնապատկերների գունային խայտաբղետությունը՝ շոշափելի ընդգծվածությամբ, շաղախվում է տազնապի և խոռվքի հետ, ուր բանաստեղծը հանդես է գալիս արդեն որպես ինքնատիպ մտածող՝ լուծելով միանգամայն բարդ հիմնախնդիրներ. «Ախ, ճերմակ են վա՛րդերն ամեն, // ճերմակ՝ նման իմ վշտերին, // սակայն ճերմակ վարդեր չեն ա՛յդ, // ճերմակ ճյունն է ալ թերթերի՛ն» (Գ. Լորկա):

Իրապաշտությունը Ե. Չարենցի պոեզիայում խորհրդանշում է՝ արտաքին «իրականության» և ներքին «երևակայության» միջև հանդիսացող սահմանազատումը: Բանաստեղծության տվյալ պատկերը բնորոշում է, ըստ էության, եղելություն, որը զուգահեռ է դառնում պատմական իրադարձությանը:

խորհրդանշական պատկերը, բնորոշ կերպով, թանձրացնում է գերժամանակային ենթաշերտը՝ անդրադարձնելով քնարական հերոսի համակ տագնապները: Քննադատը գրել է. «Ինձ թվում է, որ 20-րդ դարի գրականության և պոեզիայի առաջին հիմնադիրների մեջ է Ե. Չարենցը՝ մեծատառով գրվող այդ բանաստեղծը: Նրա խիստ ուժեղ տաղանդը երևում է և՛ կերպարի կերտման, և՛ թեմայի լայնության, և՛ նրբարվեստ քնարերգության, և՛ իր «Նաիրի» երկրի անցյալի ու ապագայի մասին արած խորհրդածությունների մեջ»²².

Նո'յնն է կարոտս հիմա՝ անսփոփ ու որբ.

նո'յնն է աշխարհը վառվող ու արևը բորբ:

Նույնն է երկինքը կապույտ ու լճակը ջինջ –

և չի՛ փոխվել իմ սրտում, իմ հոգում – ոչինչ:

(«Ողջակիզվող կրակ»)

Ձուգահեռներ ենք անցկացրել նաև իրապաշտության այլ ներկայացուցիչների հետ: Օրինակ, Թ. Էլիոթը պոեզիայում ներմուծեց բարեհնչյունության նոր տեսակ և դիժմական նոր տեսակի և ձևերի կանոնավորում, ինչը ներթափանցում է նրա բանաստեղծական աշխարհի բոլոր ենթամակարդակներում. «Երբ անցյալը միայն // խաբկանք է, ապագան՝ անապագա, երբ ժամանակը // կանգ է առնում և ժամանակն անվերջ է, իսկ անհողմ // ծփանքը, որ է և էր ի սկզբանե, հնչեցնում է զանգը» (թարգմ.՝ Ս. Մկրտչյանի): Իսկ Գ. Լորկայի «Գնչուական ռոմանսներում» միմյանցից զատված կրկնատողերը միակցվում են պատկերային մեկ ամբողջականության մեջ և բանաստեղծական հնչողությունը վերածվում է ռոմանսի, սակայն արդեն՝ «խրթին բովանդակությամբ», ուր բովանդակությունն այլևս չի «հոսում», այլ փոխակերպվում է թերասությամբ. «Դու մի խլիր ինձնից՝ ինչ ինձ է մնում // և զարդարիր ալիքներդ մաքրաջինջ // տերևներով, որ իմ աշունն է տանում» (Գ. Լորկա):

Ե. Չարենցի ստեղծագործությունները՝ «բանականության պատվով»՝ վկայում են ժամանակաշրջանի երևույթների գեղարվեստական խոր ընդհանրացման և արտահայտչական նոր ձևերի ու հնարների որոնման մասին («Մեզ համար արդեն ուղի է անցած // Համաշեշտ երգի դիթանը նվագուն,...»): Չարենցյան ուշ քնարում հիմնովին մերկացվում է միֆաձևավորման խորհրդապաշտական կաղապարը, հաստատելով ռեալիստական մտածողության դասական պաթոսը: Դասականության ձևը մի կողմից, իսկ մյուսից՝ «ներթափանցող» իրապաշտության հիմնատարներն ստեղծում են բանաստեղծության քնարական հերոսի յուրատեսակ բացահայտումը:

Գրողը միաժամանակ պարզաբանում է ժամանակաշրջանի հատկանշական իրամայականը, վերաբժևորելով «հնարավոր» իրականության գերբովանդակային՝ «հիմնական», նախաստեղծ կառուցվածքը.

²² Հիշողություններ Եղիշե Չարենցի մասին, Ե., 1961, էջ 27:

Ինչպես դարեր առաջ – վկան Նարեկացի,-
քեզ եմ հղում ես խոսքս, ո՛վ Արարիչ,
ես՝ մեղսավոր քերթողս աստվածարյալ դարի...

(«Ի խորոց սրտի խոսք ընդ աստուծո»)

Այսպիսով, անդրադառնալով 20-րդ դարասկզբի գրական զարգացումներին, որը նույնպես շաղկապված է իրապաշտության գեղագիտության դրսևորումների հետ, սույն ատենախոսական թեմայի ուսումնասիրությունն արդի գրականագիտական պահանջմունքների տեսակետից համարել ենք կարևոր:

Եզրակացություններ

«Եղիշե Չարենցը և 20-րդ դարասկզբի համաշխարհային գրական զարգացումները» թեմայի ուսումնասիրության արդյունքում հանգել ենք հետևյալ եզրակացությունների.

1. Ե. Չարենցը հայ գրականություն եկավ նորի առաջադրությամբ եռանդուն որոնումներով: Նրա գրական ուղին խաչաձևվեց ժամանակին մեծ տարածում գտած գրական հոսանքների՝ սիմվոլիզմի, ֆուտուրիզմի և մոդեռնիզմի (իրապաշտության) հետ: Բանաստեղծի վաղ շրջանի ստեղծագործությունների վրա, անշուշտ, մեծ է եղել սիմվոլիզմի ազդեցությունը: Պատանի բանաստեղծի առջև սիմվոլիստ բանաստեղծները բաց արեցին իրենց «անուրջների» խորհրդավոր աշխարհի դռները: Իսկ հետագայում ազդեցություն կրելով նաև ժամանակակիցներից՝ Ե. Չարենցը հետզհետե ուրվագծում էր բանաստեղծական կառույցի «նախատիպը» ու որոնում հայկական պոեզիայի զարգացումն առաջ տանելու, գեղարվեստական միտքը թարմացնելու, հայկական բանարվեստին գեղագիտական նոր շունչ հաղորդելու ուղիները:

2. Ե. Չարենցի համար ամենադժվարինը «երազի» կորուստն էր: Եթե «երազը» սիմվոլիստ բանաստեղծների պատկերացմամբ իրականությանը հակադրվելու, նրանից կտրվելու միջոց էր, ապա Ե. Չարենցի մտապատրանքում «երազը» ժամանակների համադրման, աշխարհի ու անհատի հարաբերության, արևի ջերմության ձգտումն էր: Նրա սթափ «միտքը թափանցում է «ինքնաճանաչողության» ամենաբարձր ոլորտները»՝ «երազելով այն երկիրը հեռավոր»: Այդպիսով, պատանեկան վաղ տարիների ապրումները պարարտ հող նախապատրաստեցին բանաստեղծի համար՝ «կապույտ հեռաստաններում» փնտրելու ոգու փրկության հրաշագործական ուղիներ: Բանաստեղծի գործերում ուրույն հնչերանգներով են միահյուսվում իրականն ու երևակայականը:

3. Գրական-ստեղծագործական հաջորդ փուլում Ե. Չարենցի ուղին առնչակցվում է ֆուտուրիզմին: «Պոեզոզունա», «Չարենց-Նամե» և ուրիշ ստեղծագործություններում փորձարկվում են լեզվի նորացման հարցերը. կարևորվում են բառաստեղծումը, պատկերների իմաստավորումն ու կերպարանակերտումը: Ե. Չարենցի ֆուտուրիստական բանաստեղծություններում յուրատեսակ պատկերակերտմամբ է ներկայացվում «երկիրը հազարամյա»՝ հնամյա «Նաիրին», ինչն էլ ավելի ուշագրավ է դարձնում բանաստեղծական խոսքի կառուցվածքը:

4. Ուսումնասիրվող ժամանակաշրջանի ֆուտուրո-կոնստրուկտիվիստական գաղափարախոսությունների համաձայն էլ Ե. Չարենցը գրում է՝ «Պոեզոզունան», «Կապկազ» (Թամաշան), «Ամենապոեմը», «Ռոմանս ան-

սերը», «Ասպետական» ռապսոդիան, «Կոմալմանախը», «Խմբապետ Շավարշը», որոնք, մեր համոզմամբ, դարձան հայ նորագուն գրականության «վճռական բեկման» ցայտուն օրինակները:

5. Սիմվոլիզմի, ֆուտուրիզմի և իրապաշտության գեղագիտության ու պոետիկայի բնորոշ կողմերի համադրման ճանապարհով Ե. Չարենցն ստեղծեց մոդեռնիստական բնույթի մի շարք ստեղծագործություններ, որոնք հարստացան արտահայտչական նոր միջոցներով ու պատկերներով, կառուցվածքային ձևերի կիրառմամբ: Ե. Չարենցն Ավ. Իսահակյանի գնահատմամբ «...բազմակողմանի կերպով ազդեց հայ գրականության զարգացման վրա, մանավանդ՝ դիթմի, լեզվի, տաղաչափության և պոետիկայի տեսակետից»:

6. Ատենախոսության մեջ ուսումնասիրվել, արժևորվել ու գնահատվել են Ե. Չարենցի և արտասահմանյան գրողների այն փոխառնչություններն ու գրական կապերը, որոնք արդյունք էին գրական-մշակութաբանական «ներթափանցումների»՝ արտացոլելով դարաշրջանի սոցիալական և գրական-գեղարվեստական հրատապ խնդիրները: Ե. Չարենցի և Գ. Լորկայի գրական հայացքները հետագայում կարևոր ազդակ հանդիսացան ապագայի պոեզիայի մեջ նոր ուղիներ բացելու և զարգացնելու առումով: Կարելի է եզրափակել, որ հենց «այդ զարմանալի համաձուլվածքն» է հատկանշող դառնում մեծ գրողի՝ Ե. Չարենցի բանաստեղծական բոցաշունչ էությունը բնութագրելիս:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԵՆ ՀԵՂԻՆԱԿԻ ՀԵՏԵՎՅԱԼ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐՈՒՄ

1. Եղիշե Չարենց–Արթուր Ռեմբո, Գիտաժողովի նյութերի ժողովածու, Ե., Հայրուսակ հրատ., 2013, էջ 92-96:
2. Соотношения армянской и русской литературы, Молодежь в науке и культуре XXI в.: Материалы международного научно-творческого форума, Челябинск, 2016, с. 49-51.
3. Եղիշե Չարենցի «Դանթեական առասպել» պոեմը, Երևանի «Հայրուսակ համալսարան», 8-րդ գիտաժողովի նյութերի ժողովածու, Ե., 2016, էջ 55-61:
4. Սիմվոլիզմի պոետիկան և զարգացման ընդհանուր բնութագիրը, Լրաբեր հասարակական գիտությունների, թիվ 3 (648), Ե., 2016, էջ 190-198:
5. Իրապաշտության պոետիկայի արտացոլումը Ե. Չարենցի և Ա. Ռեմբոյի ստեղծագործություններում, Մեսրոպ Մաշտոց համալսարանի Լրատու, Գիտական հոդվածների պարբերական ժողովածու, թիվ 2 (28), Ե., 2022, էջ 330-338:

6. Եղիշե Չարենց և Գարսիա Լորկա. գրական փոխազդեցություններ, Պատմություն և քաղաքականություն, Գիտական հանդես, թիվ 4 (21), Ե., 2022, էջ 115-122:
7. Ֆուտուրիզմի դրսևորումները Եղիշե Չարենցի ստեղծագործություններում, Հայագիտական հանդես, թիվ 3-4 (57-58), Ե., 2022, էջ 150-160:

**СУКИАСЯН НАРЕК ГАГИКОВИЧ
ЕГИШЕ ЧАРЕНЦ И РАЗВИТИЯ ВСЕМИРНОЙ ЛИТЕРАТУРЫ
В НАЧАЛАХ XX ВЕКА**

Автореферат диссертация на соискание ученой степени кандидата филологических наук по специальности 10.01.02 – «Армянская литература новейшего периода».

Защита кандидатской диссертации состоится 28-ого апреля, 2023 года в 12:30 в Институте литературы им. М. Абеяна НАН РА на заседании ученого совета ВАК по литературоведению 003. Адрес: г. Ереван, ул. Гр. Лусаворича, 15.

Тема диссертации посвящена изучению одной из важнейших проблем современного литературоведения «Егише Чаренц и развитие мировой литературы XX века». Работа состоит из введения, трех глав с равнозначными подглавами, заключения и списка литературы.

В введении мы представили общую характеристику исследования, его современность, степень разработанности, научную новизну, объект исследования, цель и задачи, методологию, теоретическую и прикладную значимость.

Первая глава «Егише Чаренц и символика» состоит из трех подразделов. В первом подразделе: «По неведомым тропам утраченной мечты», мы коснулись произведений Егише Чаренца символистского характера, рассказали о влиянии Ваана Теряна и символистов, о событиях, происходящих в общественной жизни, которые в одном так или иначе нашли свое отражение в раннем творчестве поэта («Три грустные песни девушки», «Миф Данте» и другие). Во втором подразделе: «Грозовая тайна «рыцарской рапсодии»», мы аналитическим способом обратились к символистическим произведениям поэта, провели параллели и обосновали связь между особенностями творчества Егише Чаренца, французских и русских символистов. Третий подраздел: ««Особенности и нюансы» символических красок Чаренца», посвящен литературному анализу ранних поэтических сборников поэта: «Радуга», «Часы видения», «Страна огня», «Лирические баллады» и «Пылающий огонь».

Вторая глава «Егише Чаренц и футуризм» состоит из трех подразделов. В первом подразделе: «Нормы новой направленности поэзии», мы рассмотрели содержательные вопросы итальянского, русского и армянского футуризма в

контексте литературных параллелей, затем рассказали о литературных воззваниях футуризма («Манифест футуризма», «Пощечина общественному вкусу», Декларация «трех»), обосновывается важность их значения в развитии мировой литературы. Во-втором подраздел «Новый язык и ритмы, новые рифмы и размеры поэзии» также был посвящен литературным проблемам футуризма, связанным с синтезом поэзии Егише Чаренца, критическими статьями, написанными поэтом в данный период, и высказываемыми им взглядами о футуризме. В третьем подразделе: «Символизм в горниле «революционного футуризма»», мы обратились к «постсимволистическим» произведениям Егише Чаренца и показали разные новаторские стороны его поэзии (новаторские языковые средства, разные изобразительные формы, метрические выражения). С этой точки зрения мы провели параллели между произведениями наиболее известных представителей футуризма данного периода: Т. Маринетти, В. Маяковского, В. Хлебникова и других писателей.

В третью главу «Егише Чаренц и модернизм» мы включили три подраздела. В первом подразделе: «Разнообразие форм и поэтических стилей» мы впервые представили представителей модернизма (Г. Лорка, Ф. Кафка, М. Рильке, Э. Паунд, Т. Элиот), характеризующих черты этого литературного направления и обосновали философско-эстетические отклики в армянской литературе и произведениях Егише Чаренца. Во-втором подразделе: «Жанровая «галерея» сюрреалистической поэзии», рассматривалась специфика жанра («сюрреалистический театр», «конструктивизм», «урбанизм», «новый реализм»), характерная для модернистской поэзии. Исследование показало, что и в этом случае поиски творческого самовыражения также выводят Егише Чаренца на сложный путь совершенствования поэзии (сборник: «Эпическая заря»). Поэт по-своему продолжил традиции классического искусства, полностью отвечавшего современным эстетическим требованиям. В произведениях Е. Чаренца эстетика сюрреализма символизирует границу между внешней «реальностью» и внутренним «воображением». А третий подраздел: «Литературные взаимодействия Е. Чаренца и Г. Лорки», посвящен сравнительному анализу литературной деятельности Е. Чаренца и Г. Лорки. Мы упомянули о литературно-творческом взаимодействии двух поэтов, обратились к литературным произведениям, написанным на общественно-политические темы, к выраженным в них художественным проблемам сюрреализма. Мы провели параллели и оценили связь творчества Е. Чаренца и Г. Лорки, а также поэтов, отражающих эстетику модернизма: Г. Тракля, Э. Паунда, П. Верлена и других.

В конце диссертации были обобщены результаты исследования.

Диссертация заканчивается списком литературы.

NAREK GAGIK SUKIASYAN

**YEGHISHE CHARENTS AND THE DEVELOPMENT OF WORLD POETRY
AT THE BEGINNING OF THE 20 CENTURY**

Abstract of the dissertation to receive a scientific degree of the PHD in philology in 10.01.02 “Modern Armenian Literature”.

Defence of the thesis will be held on April 28, 2023 at 12:30 at the session of the SCC 003 special commission for the speciality of “Literary Studies” at the M. Abeghyan Institute of Literature of the National Academy of Sciences of Armenia at the following address: Yerevan, Grigor Lusavorich 15.

The theme is devoted to the study of one of the most important problems of modern literary studies: "Yeghishe Charents and the developments of world literature of the 20th century". The work consists of an introduction, three chapters with equivalent sub-chapters, a conclusion and a list of references.

In the introduction we have presented the general characteristics of the study, its modernity, degree of development, scientific novelty, object of study, goal and problems, methodology, theoretical and applied significance.

The first chapter, "Yeghishe Charents and Symbolism", consists of three subsections. In the first subsection, "On unknown paths of a lost dream", we referred to Yeghishe Charents' works of a symbolist nature, talked about the influences of Vahan Teryan and the symbolists, and the events taking place in public life, which in one way or another were reflected in the poet's early works ("Three sad songs to the girl", "Dante's myth", etc.). Secondly, in the sub-section "The Storm Mystery of the Knightly Rhapsody", we analytically referred to the poet's symbolist works, drew parallels and substantiated the connection between the features of the works of Yeghishe Charents, French and Russian symbolists. The third subsection, "The features and nuances of Charents' symbolic colors", is dedicated to the literary analysis of Yeghishe Charents' early poetic collections: "Rainbow", "The Hour of The Vision", "The Land of Fire", "Lyrical Ballads", "The Burning Fire".

The second chapter, "Yeghishe Charents and Futurism", has three subsections. In the first sub-section, "Standards of the new orientation of poetry", we examined the substantive issues of Italian, Russian and Armenian futurism in the context of literary parallels, then talked about the literary proclamations of futurism ("Futurism Manifesto", "Slap to Public Taste" and "The Declaration"), justified the importance of their meaning in the development of world literature. Second, the subsection "New language and rhythms, new rhymes and dimensions of poetry" was also devoted to the literary issues of futurism, linked to the synthesis of Yeghishe Charents's poetry, critical articles he wrote in the given period, and the opinions he

expressed about futurism. In the third sub-section "Symbolism in the crucible of "revolutionary futurism"", we referred to the "post-symbolist" works of Yeghishe Charents and showed different innovative aspects of his poetry (poetic language means, various pictorial forms, typographical expressions). From that point of view, we drew parallels with the most famous representatives of futurism of the given period, T. Marinetti, V. Mayakovsky, the works of V. Khlebnikov and other writers.

In the third chapter, "Yeghishe Charents and Modernism", we have included three subsections. In the first subsection, "Variety of Forms and Styles and Poetics", we first introduced the representatives of modernism (G. Lorca, F. Kafka, M. Rilke, E. Pound, T. Eliot), characterized the features of that literary direction and justified its philosophical and aesthetic responses in Armenian literature and works of Yeghishe Charents. Second, in the subsection "The Genre "Gallery" of Surrealist Poetry", the specifics of the genre ("surrealist theater", "constructivism", "urbanism", "new realism") characteristic of modernist poetry were examined. The study showed that in this case, the search for creative expression also leads Yeghishe Charents to the complex path of improving poetry ("Epic Dawn" collection). The poet in his own way continued the traditions of classical art, which fully corresponded to modern aesthetic requirements. In the literary works of Yeghishe Charents, surrealism symbolizes the boundary between external "reality" and internal "imagination". And "Yeghishe Charents and Garcia Lorca: literary interactions", the third subsection, is dedicated to the comparative analysis of Yeghishe Charents and García Lorca's literary activity. We referred to the literary and creative interactions of the two poets, the literary works written on social and political topics, the artistic issues of surrealism expressed in them. We drew parallels and assessed the connection between the works of Yeghishe Charents and García Lorca, as well as poets reflecting the aesthetics of modernism: Georg Trakle, Ezra Pound, Paul Verlaine and others.

At the end of the dissertation, the results of the study were brought together.

The dissertation ends with a list of references.

